ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

03.01.2022 - 26.05.2022 թթ. Ժամանակահատվածի համար

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից գլխավոր քարտուղարի և /կամ/ բաժնի պետի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների /այսուհետ՝ ՊՈԱԿ/ 2022 թվականի կարիքների համար սննդամթերքի, հանդերձանքի և անկողնային պարագաների կենտրոնացված կարգով՝ «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգերի կազմակերպում և ամփոփում, գնահատող հանձնաժողովի քարտուղարի պարտականությունների իրականացում /ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք/,
- Մասնակից կազմակերպությունների կողմից միտումնավոր գնման ընթացակարգերի խափանման և խոչընդոտման պատճառով չկայացած չափաբաժինների մասով 2022 թվականի հունվարից մարտ ամսիների համար «հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից» գնման ընթացակարգերի հայտարարում,
- ՊՈԱԿ-ների կարիքների համար սննդամթերքի, հանդերձանքի և անկողնային պարագաների կենտրոնացված կարգով ձեռքբերման «գնանշման հարցում» գնման ընթացակարգերի հայտարարում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 31-ի թիվ 411-Ա որոշումը,
- Նախարարության ենթակայության «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն», «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն», «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն», «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն», «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» և «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ների 2022 թվականի կարիքների համար պատրաստի սննդի փաթեթների ձեռքբերումն

ապահովելու նպատակով «գնանշման հարցում» գնման ընթացակարգերի հայտարարում, վերահայտարարում և ամփոփում,

- Նախարարության 2022 թվականի կարիքների համար «Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ՝ հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» ծրագրի շրջանակներում տպագրական և առաքման ծառայությունների, «Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» ծրագրի շրջանակներում անվադողերի, «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների տրամադրման անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն միջոցառման» ծրագրի շրջանակներում տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգերի հայտարարում, վերահայտարարում և ամփոփում,

- Նախարարության ենթակայության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» և «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ների 2021 թվականի կարիքների համար գույք և տեխնիկա «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի հայտարարում, վերահայտարարում և ամփոփում,

- Նախարարության 2022 թվականի կարիքների համար կենցաղային և հանրային սննդի նյութերի «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի հայտարարում, վերահայտարարում և ամփոփում,

- Նախարարության 2022 թվականի կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների «գնանշման հարցում» գնման ընթացակարգի հայտարարում, վերահայտարարում և ամփոփում,

- Նախարարության կարիքների համար Արարատի կամ Արմավիրի մարզում «18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայնքային փոքր տներում խնմաքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում» միջոցառման շրջանակում 18 տարեկանից բարձր 10-12 անձանց խնամքի կազմակերպման համար համայնքային փոքր տան՝ «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգի հայտարարում,

- Գնման ընթացակարգերի հայտարարության տեքստերի /հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով/, գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին հրամանների, ինչպես նաև պարտադիր հրապարակման ենթակա փաստաթղթերի նախագծերի կազմում և ներկայացում հաստատման,
- Գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկված ՊՈԱԿ-ների աշխատակիցներին մեթոդական օժանդակության ցուցաբերում՝ էլեկտրոնային եղանակով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու, գնման հայտերում արձանագրված անճշտությունները շտկելու, գնումների մասին ՀՀ օրենսդրության հետ կապված այլ հարցերի մասով,
- Գնման ընթացակարգերի հայտարարման նպատակով աշխատակարգային տվյալների մուտքագրում գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության էլեկտրոնային ենթամոդուլ /ppcm/ համակարգ, անցում կատարելով eauction.armeps.am կամ armeps.am համակարգեր,
- Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով մակագրված հանձնարարականների կատարում, գրությունների կազմում, շրջանառում,
- Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսվելիք միջոցների հաշվին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացնելու նպատակով մրցույթների հայտարարում, վերահայտարարում և ամփոփում: 2022 թվականի պետական բյուջեով նախատեսվելիք միջոցների հաշվին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացնելու նպատակով մրցույթները հայտարարվել են www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով, համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման /այսուհետ՝ Որոշում/ և 27.01.2021թ. N 97-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության հիմքով, պայմանով, որ կնքվելիք պայմանագրով սահմանված կողմերի իրավունքները և պարտականությունները կգործեն այդ նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև համաձայնագիր կնքելու օրվանից:

  Հայտարարվել է թվով 16 մրցույթ, չափաբաժինների ընդհանուր թիվ՝ 124, կնքված պայմանագրերի թիվ՝ 100,

- Կնքված պայմանագրերի մուտքագրում գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության էլեկտրոնային ենթամոդուլ /ppcm/ համակարգ,
- Դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության պայմանագրի կատարման մասին ամենամսյա ամփոփ արձանագրությունների կազմում, ներկայացում հաստատման:

Գնումների համակարգման բաժնի փորձագետ Լ. Մկրտչյան

26"05"2022թ"

Հրդեհաշեջի գնումներ՝

ՀՀՀԷԿ գնումների հանձնաժողովի բաժնի փորձագետի աշխատանքային գնումներ՝ ԱՄ գնորդական։